ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԵՐԿԻՐ ԾԻՐԱՆԻ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1.Ընդհանուր դրույթներ

1.1 «Երկիր Ծիրանի» խմբակցությունը (այսուհետեւ՝ Խմբակցություն) «Երկիր Ծիրանի» կուսակցության Ժողովի որոշման հիման վրա 2017 թվականի մայիսի 14-ին մասնակցել է Երևանի ավագանու ընտրություններին «Երկիր Ծիրանի» կուսակցության ցուցակով և ծրագրով:
Համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական տվյալի «Երկիր Ծիրանի» կուսակցությունը Երևանի ավագանում ստացել է հինգ տեղ (մանդատ):
1.2 Խմբակցության անդամները հիմք ընդունելով «Երկիր Ծիրանի» կուսակցության կանոնադրությունը, Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության կանոնադրությունը, «Երկիր Ծիրանի» կուսակցության ծրագիրը և «Երկիր Ծիրանի» կուսակցության Երևանի ավագանու ծրագիրը, ստանձնում են պարտականություն իրենց գործողություններով, վարքով և կայացրած որոշումներով հավատարիմ մնալ վերը նշված կանոնադրություններին և ծրագրային դրույթներին՝ ցուցաբերելով գործուն մասնակցություն հասարակական ու քաղաքական կյանքին և նպաստել ժողովրդի քաղաքական կամքի ձեւավորմանն ու արտահայտմանը:
1.3 Խմբակցության անդամները պարտավոր են իրենց գործունեությունը ծավալել «Երկիր Ծիրանի» կուսակցության Ժողովի, Համազումարի և Խմբակցության որոշումների հիման վրա՝ հիմք ընդունելով «Երկիր Ծիրանի» կուսակցության ծրագիրը և գաղափարախոսությունը՝ հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցություն ցուցաբերել «Երկիր Ծիրանի» կուսակցության կողմից ընդունված ձևերով և եղանակով (մեթոդաբանությամբ), նպաստել ժողովրդի քաղաքական կամքի ձեւավորմանն ու արտահայտմանը:

2. Խմբակցության անդամ. իրավունքներ ու պարտականություններ

2.1 Խմբակցության անդամ կարող է լինել «Երկիր Ծիրանի» կուսակցության Երևանի ավագանու ցուցակում ընգրկված ավագանու ցանկացած անդամ ում

հերթը հասել է ցուցակի հերթական համարի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցմամբ կամ հրաժարականի հիման վրա:

2.2 Խմբակցության անդամը չի կարող լինել այլ կուսակցության անդամ:

2.3 «Երկիր Ծիրանի» կուսակցության Ժողովի կողմից խմբակցության ավագանու անդամին անվստահություն հայտնելու, Խմբակցության անդամի Խմբակցությունից դուրս գալու, Խմբակցության որոշումները չկատարելու դեպքերում չի կարող լինել Երևանի ավագանու մշտական և այլ հանձնաժողովների անդամ:

2.4 «Երկիր Ծիրանի» կուսակցության Ժողովի կողմից խմբակցության ավագանու անդամին անվստահություն հայտնելու, Խմբակցության անդամի Խմբակցությունից դուրս գալու մասին գրավոր կամ բանավոր դիմումը (հայտարարությունը) ներկայացնելու, Խմբակցության որոշումները չկատարելու դեպքերում, «Երկիր Ծիրանի» կուսակցության Ժողովի որոշման հիման վրա կարող են դադարեցվել ավագանու անդամի լիազորությունները: Վերը թվարկված յուրաքանչյուր հիմքով՝ (մեկ կամ մի քանի հիմքերով) ավագանու լիազորությունների դադարեցման մասին դիմումը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով «Երկիր Ծիրանի» կուսակցության նախագահի կողմից:

<u>2.4 Խմբակցության անդամն իրավունք ունի.</u>

ա) նախաձեռնելու ավագանու ակտերի ընդունումը (ներառյալ՝ բյուջեի),

բ) ստանալու ավագանու իրավական ակտերը, ինչպես նաև քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների, քաղաքային ենթակայության կազմակերպությունների գործունեության վերաբերյալ տեղեկություններ,

գ) ելույթ ունենալու ավագանու, ավագանու հանձնաժողովների նիստերում, հարցեր տալու,

դ) կատարելու Երևանի բնակիչների ընդունելություն, կազմակերպելու հանրային հանդիպումներ,

ե) առաջարկություններ ներկայացնելու ավագանու նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ,

զ) ավագանու և քաղաքապետի որոշումները կամ գործողությունները բողոքարկելու դատական կարգով, եթե խախտվել են նրա՝ որպես ավագանու անդամի իրավունքները,

է) «Երկիր Ծիրանի» կուսակցության մարմինների քննարկմանը ներկայացնել հասարակական-քաղաքական կյանքի, Կուսակցության գործունեության եւ այլ հարցերի վերաբերյալ նախաձեռնություններ եւ առաջարկություններ:

2.5 Խմբակցության անդամը պարտավոր է.

ա) գործել «Երկիր Ծիրանի» կուսակցության կանոնադրության, Խմբակցության կանոնադրության եւ «Երկիր Ծիրանի» կուսակցության ու «Երկիր Ծիրանի» կուսակցության Երևանի ավագանու ծրագրերի շրջանակներում չիրականացնել 2.4 կետի ա) ենթակետում նշված դրույթներին ու ծրագրերին հակասող գործողություններ,

բ) նպաստել «Երկիր Ծիրանի» կուսակցության նպատակների եւ խնդիրների իրականացմանը,

դ) կատարել Խմբակցության կանոնադրության պահանջները,

ե) մասնակցել ավագանու նիստերին,

զ) մասնակցել Խմբակցության նիստերին,

է) Խմբակցության որոշման հիման վրա անդամակցել Երևանի ավագանու որևէ մշտական հանձնաժողովի, այլ հանձանժողովների և մասնակցել դրանց նիստերին,

ը) մասնակցել Խմբակցության կողմից անցկացվող Երևանի բնակիչների ընդունելություններին,

թ) չմասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր ընտանիքի անդամների և մերձավոր ազգականների մասնավոր շահերին,

ժ) դեմ քվեարկել բոլոր այն որոշումներին, որոնք հակասում են հայ ժողովրդի ազգային շահին,

ժա) դեմ քվեարկել բոլոր այն որոշումներին, որոնք հակասում են «Երկիր Ծիրանի» կուսակցության և «Երկիր Ծիրանի» կուսակցության Երևանի ավագանու ծրագրերին:

2.6 Խմբակցության և ավագանու անդամակցության վաղաժամկետ դադարեցման հիմք են.

ա) երբ ավագանու անդամը գրավոր կամ բանավոր դիմում (հայտարարություն) է ներկայացրել Խմբակցության կազմից դուրս գալու վերաբերյալ,

բ) երբ ավագանու անդամը կորցրել է համայնքի ավագանու ընտրական իրավունքը,

գ) երբ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ավագանու անդամը անհայտ բացակայող կամ մահացած է ճանաչվել,
դ) երբ ավագանու անդամը ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ դիմում է ներկայացրել,
ե) երբ ավագանու անդամը ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու պահից մեկ շաբաթվա ընթացքում այդ մասին գրավոր չի տեղեկացրել քաղաքապետին,
զ) երբ ավագանու անդամը հրաժարական է տվել,
է) երբ ավագանու անդամը մահացել է,
ը)երբ առկա է «Երկիր Ծիրանի» կուսակցության Ժողովի կողմից ավագանու անդամի նկատմամբ անվստահության որոշում, որի հիման վրա Խմբակցության անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ նա դադարել է լինել ավագանու մշտական և/կամ այլ հանձնաժողովների անդամ և այդ որոշումը հաստատվել է «Երկիր Ծիրանի» կուսակցության Ժողովի կողմից,
թ) երբ նա անհարգելի պատճառներով բացակայել է մեկ ամսվա ընթացքում Խմբակցության նիստերի կեսից Խմբակցության անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշման հիման վրա և այդ որոշումը հաստատվել է «Երկիր Ծիրանի» կուսակցության Ժողովի կողմից,
ժ) երբ «Երկիր Ծիրանի» կուսակցության Ժողովի որոշման հիման վրա, անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ նրա նկատմամբ անվստահություն է հայտնվել և/կամ նա հեռացվել է կուսակցությունից,
ժա)երբ ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել են ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, եթե նա մեկ հերթական նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից կամ հանձնաժողովի նիստերի կեսից,
ժբ)երբ «Երկիր Ծիրանի» կուսակցության ցուցակով Երևանի ավագանի ընտրված հինգ անդամներից որևէ մեկը հրաժարվել է սույն Կանոնադրության 1.2 և 1.3 կետերում նշված դրույթները կատարելուց և/կամ առկա են սույն Կանոնադրության 2.6 կետի ա), բ), գ), դ), ե), զ), է), ը), թ), ժ), ժա) ենթակետերի դրույթներով նախատեսված հիմքերը (մեկը կամ մի քանիսը), ավագանու անդամը ենթակա է փոխարինման «Երկիր Ծիրանի» կուսակցության կողմից ներկայացված Երևանի ավագանու ցուցակի այլ անդամով՝ «Երկիր Ծիրանի» կուսակցության Ժողովի կողմից ընդունված ռոտացիոն սկզբունքի հիման վրա:

3. Խմբակցության ղեկավար

3.1 Խմբակցության ղեկավարը ընտրվում է Խմբակցության անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ և գործում է մինչև Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության գործունեության ավարտը և այդ որոշումը հաստատվում է «Երկիր Ծիրանի» կուսակցության Ժողովի կողմից:

3.2 Խմբակցության ղեկավարը՝

ա) ղեկավարում է Խմբակցության աշխատանքները,

բ) հրավիրում եւ վարում է խմբակցության նիստերը, ստորագրում որոշումները եւ նիստերի արձանագրությունները,

գ) ներկայացնում է Խմբակցությունը առանց լիազորագրի, հանդես է գալիս Խմբակցության անունից,

դ) հրավիրում է Խմբակցության արտահերթ նիստ,

ե) ապահովում է որոշումների կատարումը,

զ) իր իրավասության սահմաններում որոշումներ է կայացնում Խմբակցության գործունեության ընթացիկ հարցերի վերաբերյալ եւ ստորագրում է հրամաններ, կարգադրություններ եւ անհրաժեշտ այլ փաստաթղթեր,

է) «Երկիր Ծիրանի» կուսակցության Ժողովին զեկույց է ներկայացնում Խմբակցության գործունեության վերաբերյալ,

ը) «Երկիր Ծիրանի» կուսակցության Համագումարում զեկույց է ներկայացնում Խմբակցության կատարած գործունեության վերաբերյալ,

թ) «Երկիր Ծիրանի» կուսակցության Ժողովի հաստատմանն է ներկայացնում Խմբակցության գործունեության հետ կապված հարցեր՝ իրավական ակտի նախաձեռնում, դատական հայցի ներկայացում, սույն Կանոնադրությունով նախատեսված բոլոր այն որոշումները, որոնք ենթակա են «Երկիր Ծիրանի» կուսակցության Ժողովի հաստատմանը և այլն,

ժ) օրենքով եւ սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով ղեկավարում/համակարգում է Խմբակցության աշխատակազմի և ավագանու անդամների գործունեությունը,

ժա) ընտրում և ներկայացնում է Երևանի քաղաքապետարանի համապատասխան վարչությանը Խմբակցության հաստիքակազմի աշխատակիցներին,

ժբ) Խմբակցության անխափան գործունեությունն ապահովելու համար կայացնում է որոշումներ՝ Խմբակցության աշխատակազմի հաստիքային աշխատակիցների սահմանված լիազորությունների չկատարման դեպքում,

3.3 Խմբակցության ղեկավարի բացակայության ընթացքում՝ նրա պարտականությունները կատարում է Խմբակցության քարտուղարը, ով ընտրվում է Խմբակցության անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ մեկ տարի ժամկետով և այդ որոշումը հաստատվում է «Երկիր Ծիրանի» կուսակցության Ժողովի կողմից:

4.Խմբակցության նիստեր

4.1 Խմբակցության հերթական նիստերը հրավիրվում և անցկացվում են նվազագույնը շաբաթը մեկ անգամ: Խմբակցության հերթական նիստերի օրը և ժամը նախապես որոշվում է: Հերթական նիստի օրվա և ժամի փոփոխության կամ արտահերթ նիստ հրավիրելու դեպքում Խմբակցության անդամները նախապես՝ առնվազն մեկ օր առաջ տեղեկացվում են Խմբակցության ղեկավարի եւ/կամ գործավարի կողմից (հեռախոսազանգի, էլեկտրոնային փոստի, facebook՝ սոցիալական ցանցի միջոցով):

Նիստերի անցկացման վայրն է՝ Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1) Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» Խմբակցության աշխատասենյակը կամ «Երկիր Ծիրանի» կուսակցության կենտրոնական գրասենյակը (Մաշտոցի 33/1, առաջին տարածք):

4.2 Խմբակցության նիստի ժամանակ պարտադիր քննարկման առարկա են Երևանի ավագանու նիստերի օրակարգերը, մշտական և այլ հանձնաժողովների օրակարգերը ու դրանց վերաբերյալ հարցապնդումների, ելույթների և քվեարկությունների դիրքորոշումները:

4.3 «Երկիր Ծիրանի» կուսակցության Ժողովի և Խմբակցության անդամների համատեղ նիստում ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունվում է որոշում Խմբակցության անդամների ավագանու և մշտական ու այլ հանձնաժողովների նիստերում յուրաքանչյուրի հարցապնդումի, ելույթի և քվեարկության վերաբերյալ:

4.4 Խմբակցության որոշումները ընդունվում են անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

4.5 Խմբակցության կողմից կայացված որոշումները, «Երկիր Ծիրանի» կուսակցության Ժողովի և Խմբակցության անդամների կողմից համատեղ նիստում կայացված որոշումները և բոլոր այն որոշումները, որոնք ենթակա են

«Երկիր Ծիրանի» կուսակցության Ժողովի կողմից հաստատմանը պարտադիր են Խմբակցության բոլոր անդամների համար:

4.6 Խմբակցության նիստերը արձանագրվում են և նրանց մեկ օրինակը Խմբակցության ղեկավարը փոխանցում է «Երկիր Ծիրանի» կուսակցության Ժողովին:

Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության կանոնադրությունը ուժի մեջ է մտնում Երկիր Ծիրանի» կուսակցության Ժողովի հաստատումից հետո:

Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության կանոնադրությունը կազմված է երեք օրինակից:

Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության կանոնադրությունն ընդունվել է 14.06.2017թ.:

Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության կանոնադրությունը հաստատվել է «Երկիր Ծիրանի» կուսակցության Ժողովի կողմից 15.06.2017թ.: